ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Նվիրվում է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի հիմնադրման 50-ամյակին

№ 16

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

Посвящается 50-летию основания факультета востоковедения ЕГУ

№ 16

Ереван
Издательство ЕГУ
2019

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES

Dedicated to the 50th anniversary of the foundation of the faculty of Oriental Studies of YSU

№ 16

YEREVAN
YSU PRESS
2019

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Գրեկյան Երվանդ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Դավիթ Հովհաննիսյան
8-9-ՐԴ ԴԱՐԵՐԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱԴԱՊՏԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐ 9-22

Վահե Հակոբյան
ԻՍԹԻՀՍԱՆԸ ՍՈՒՆՆԻԱԿԱՆ ՄԱԶՀԱԲՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԴԱՊՏԱՑԻԱՆ 23-34

Ռուբեն Միրաքյան,Հարություն Մաթևոսյան
ՈՒՍԱՄԱ ԲԵՆ ԼԱԴԵՆԻ ԿՈՂՄԻՑ ՋԻՀԱԴԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄԸ ԸՆԴԴԵՄ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԻ 35-47

Անդրանիկ Հարությունյան
«ԵՐԵՔ ԾՈՎԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ» ԿԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՇՈՒՐՋ 48-60

Թյուրքագիտություն

Ավետիք Հարությունյան
ԹՈՒՐՔԻԱՅԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆԸ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ 61-75

Հայկ Դարբինյան
ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 76-87

Մարիամ Մելքոնյան
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԴԻՎԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՆԵՋԱԹԻ ԵՎ ՄԻՀՐԻ ՀԱԹՈՒՆ 88-96

Արթուր Միրզոյան
ՀԱՅ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊՈԵԶԻԱՅԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ 97-108

Տաթևիկ Սարգսյան
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱՎԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (SOCAR) ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 109-119

Սամվել Ռամազյան
«ՔՅՈՌՕՂԼԻ» ԷՊՈՍԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԵՎ XVIII ԴԱՐԻ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 120-152

Իրանագիտություն

Արտյոմ Տոնոյան
ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ (ԹԱԹԵՐԵՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ. 153-160

Լիանա Պետրոսյան
ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԱՆՈՒՄ ՄԱՀՄՈՒԴ ԱՀՄԱԴԻՆԵԺԱԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2005-2009 ԹԹ.) 161-171

Շուշաննա Գալստյան
ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱ-ԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՓՈՐՁԸ ԲԱՀՐԵՅՆ 172-180

Աննա Գևորգյան
«ՄԱՐՋԱՅԵ ԹԱՂԼԻԴԻ» ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ ՇԻԱՅԱԿԱՆ ՑԱՆՑԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՆ 181-191

Հասմիկ Բիանջյան
ԽԱՂԱՆԻԻ ՊՈԵՏԻԿԱՅԻ ՇՈՒՐՋ 192-198

Հովհաննես Խորիկյան
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ XX ՍԱՏՐԱՊՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ 199-209

Անի Նահապետյան
ԱՌԱՋԻՆ ԱՔԵՄԵՆՅԱՆՆԵՐԸ ԵՎ ՄՈԳԵՐԸ 210-223

***

Ամալյա Գրիգորյան
ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱՎՈՐԸ՝ ՈՐՊԵՍ ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԻՐԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿ. ԱՌԱՍՊԵ՞Լ, ԹԵ՞ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ 224-229

Տիգրան Գրիգորյան
«ՃԱՆԿՈՂ ԱՐԾԻՎԸ» ԵՎ «ԵՐԿՆԱՅԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ» ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ 230-247

CONTENT

Arabic Studies

Davit Hovhannisyan
ARAB WORKS OF THE 8-9TH CENTURIES AS A SOURCE FOR THE STUDY OF ADAPTATION PROCESSES 9-22

Vahe Hakobyan
ISTIHSAN IN SUNNI MAZHABS AND ITS ADAPTATION 23-34

Ruben Mirakyan, Harutyun Matevosyan
THE DECLARATION OF JIHAD AGAINST AMERICANS BY OSAMA BIN LADEN 35-47

Andranik Harutyunyan
THE TRANSFORMATION OF THE FOREIGN POLICY OF THE STATE OF QATAR IN THE THREE SEA SYSTEM 48-60

Turkic Studies

Avetik Harutyunyan
THE ROLE OF MILITARY IN FOREIGN POLICY DECISION MAKING IN TURKEY IN 1990's 61-75

Hayk Darbinyan
THE PERCEPTION OF DIPLOMACY BY OTTOMANS AND ITS PRACTICE IN THE CONTEXT OF EXTERNAL WORLD 76-87

Mariam Melkonyan
REFLECTION OF GENDER CONTRADICTIONS IN DIVAN LITERATURE: NEJATI AND MIHRI HATUN 88-96

Arthur Mirzoyan
COMPARATIVE ANALYSIS OF CONTEMPORARY ARMENIAN AND AZERBAIJANI POETRY 97-108

Tatevik Sargsyan
THE ACTIVITIES OF STATE OIL COMPANY OF AZERBAIJAN (SOCAR) IN GEORGIA 109-119

Samvel Ramazyan
THE QUESTIONS OF STUDYING OF THE HISTORISM OF

THE EPIC OF “KOROGLU” AND THE ARMENIAN HISTORIOGRAPHY OF THE XVIII CENTURY 120-152

Iranian Studies

Artyom Tonoyan
ON SOME METHODOLOGICAL FEATURES IN UNIVERSITY TEACHING OF CAUCASIAN PERSIAN (TAT) LANGUAGE 153-160

Liana Petrosyan
THE SOCIO-POLITICAL SITUATION IN IRAN UNDER THE FIRST PRESIDENTAL TERM OF MAHMOUD AHMADINEJAD (2005-2009) 161-171

Shushanna Galstyan
THE EXPERIENCE OF EXPORTING THE IDEOLOGY OF THE IRANIAN ISLAMIC REVOLUTION TO BAHRAIN 172-180

Anna Gevorgyan
THE INSTITUTE OF “MARJAYE TAQLID” AS A CORE FACTOR OF THA SHIA NETWORK 181-191

Hasmik Bianjyan
ABOUT KHAQANI SHIRVANI’S POETRY 192-198

Hovhannes Khorikyan
ON THE LOCATION OF THE XX SATRAPY OF ACHAEMENID PERSIA 199-209

Ani Nahapetyan
THE FIRST ACHAEMENIDS AND MAGIS 210-223

***

Amalya Grigoryan
KING SOLOMON AS A REAL AUTHOR OF THE SONG OF SONGS: MYTH OR TRUTH? 224-229

Tigran Grigoryan
THE SYMBOLS OF "CLAWING EAGLES" AND "HEAVENLY KINGDOMS" IN THE ART OF CHRISTIAN EAST 230-247

Արտյոմ Տոնոյան*

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ (ԹԱԹԵՐԵՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր՝ *կովկասյան պարսկերեն, իրանական բարբառագիտություն, համալսարանական դասավանդում, կառուցվածքային մոտեցում, համալիր կառուցվածքային մոտեցում*

Իրանական մեռած և կենդանի լեզուների նկարագրական, պատմահամեմատական և զուգադրական ուսումնասիրությունը մշտապես եղել է և կա դասական իրանագիտության (իրանական բանասիրության) հիմնական խնդիրներից մեկը։ Թեև իրանական բանասիրության մոտ երկդարյա պատմության ընթացքում մեռած լեզուների (հին և միջին պարսկերեն, Ավեստայի լեզու, մարերեն, սկյութերեն, պարթևերեն, խորեզմերեն, բակտրիերեն, սողդերեն, խոթանասակերեն, թումշուղասակերեն), ինչպես նաև գրային հարուստ ավանդույթ, պետական լեզվի կարգավիճակ, կրողների մեծ քանակ ունեցող կենդանի լեզուների (ժամանակակից պարսկերեն, աֆղաներեն, տաջիկերեն, քաբուլյան դարի, օսերեն, քրդերեն) ուսումնասիրությունը զուգորդվել է Իրանական սարահարթում և դրանից դուրս խոսվող իրանական անգիր լեզուների և բարբառների քննությամբ և այս ուղղությամբ հսկայական ակադեմիական գրականության ստեղծմամբ, սակայն թե՛ արևմտյան, թե՛ ցարական և ապա խորհրդային իրանագիտական դպրոցներում դասավանդված լեզուների շրջանակը սահմանափակվել է հիմնականում վերը թվարկված

* ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի ասիստենտ, բ.գ.թ., էլ. փոստ՝ artyom.tonoyan@ysu.am

որոշ մեռյալ (հին պարսկերեն, Ավեստայի լեզու, միջին պարսկերեն և պարթևերեն) և գրային հարուստ ավանդույթ ու պետական լեզվի կարգավիճակ ունեցող լեզուներով (պարսկերեն, տաջիկերեն, աֆղաներեն, քրդերեն)։ Ի տարբերություն թվարկված լեզուների՝ Իրանական սարահարթի և դրանից դուրս խոսվող մյուս լեզուների՝ բուհական դասավանդման փորձ Արևմուտքում և խորհրդային տարածքում չի եղել[1]։

Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում իրանագիտական ուսումնասիրությունների ոլորտում վտանգված իրանական լեզուների և բարբառների ուսումնասիրության և լայն իմաստով իրանական բարբառագիտության առաջնայնացման ընդհանուր միտումները, ինչպես նաև Խորհրդային Միության փլուզումը, արցախյան հակամարտությունը, Հայաստանի՝ տարածաշրջանային մարտահրավերների և դրանց արձագանքման անհրաժեշտության, երկարաժամկետ ռազմավարական ծրագրերի իրականացման կարևորության գիտակցումը պայմանավորեցին նաև հայաստանյան արևելագիտության և մասնավորապես իրանագիտության նոր առաջնահերթությունների և նպատակների վերաձևակերպումը, որի արդյունքում ԵՊՀ իրանագիտության ամբիոնում սկիզբ առավ ոչ միայն Իրանական սարահարթում, այլ նաև դրանից դուրս և հատկապես Ադրբեջանական Հանրապետությունում խոսվող

[1] Իրանագիտության ավանդական կենտրոններից դուրս Իրանական սարահարթում խոսվող լեզուներից և բարբառներից բելուջերենն է, որ դասավանդվում է Պակիստանի Բելուջստան նահանգում գտնվող Քվետտայի համալսարանում։ Բացի սրանից՝ վերջին տարիներին գիլաներենի բուհական դասավանդման փորձ է կատարվել նաև Իրանի Գիլանի համալսարանում և Գիլանագիտական հետազոտությունների կենտրոնում։ Ընդ որում՝ Իրանում նմանատիպ փորձ է կատարվում այժմ նաև քրդերենի դեպքում՝ դրա՝ միանգամից երկու՝ Քերմանշահի և Սանանդաջի համալսարաններում դասավանդմամբ, թեև քրդերենը նախկինում էլ եղել է և այժմ էլ է դասավանդվող լեզու ոչ միայն արևմտյան և հետխորհրդային իրանագիտական կենտրոններում, այլ նաև Թուրքիայի Հանրապետության և Իրաքի Քրդստանի որոշ համալսարաններում։

իրանական անգիր լեզուների և բարբառների համալիր ուսումնասիրություն[2]:

Կովկասյան պարսկերենը[3], որի դասավանդումը համալսարանական լսարան բերելու առումով ԵՊՀ

[2] Միայն վերջին երկու տասնամյակների ընթացքում ԵՊՀ իրանագիտության ամբիոնում հետազոտվել է մոտ քսան իրանական լեզու և բարբառ, որոնց արդյունքները ամփոփված են ոչ միայն տեղական և միջազգային ամսագրերում հրատարակված հոդվածներում, այլ նաև Հայաստանի Հանրապետության տարբեր գիտական խորհուրդներում պաշտպանված և ցավոք առայժմ դեռ անտիպ թեկնածուական ատենախոսություններում, այդ թվում՝ **Բոյաջյան Վ.** (2001) Բելուջերենի բարբառների լեզվական առանձնահատկությունները; **Կիրակոսյան Հ.** (2004) Ազարին՝ Ատրպատականի հին լեզուն; **Ջաֆարի Ջ.** (2007) Աբիյանեի բարբառը; **Սաղեղփուր Ա.-Ռ.** (2008) Աբաղեի բարբառը; **Ասղարի Ա.** (2008) Քալասուրի բարբառը, **Շահսավարի Ֆ.-Ա.** (2011) Լաքերենի Ալիշտարի բարբառը; **Համեդ Ֆ.** (2011) Մանուջանի բարբառը; **Զոլֆաղարի Ա.** (2012) Ավրոմանի բարբառը; **Սաֆարի Է.** (2013) Գալեշների լեզուն; **Վայնրայխ Մ.** (2014) Պակիստանի հյուսիսային տարածքների ներգաղթյալ փուշթունների լեզուն և լեզվական միջավայրը; **Քեշմիրի Ա.** (2014) Հարավթաթական Թաքեստանի բարբառը; **Ռոշանաք Գ.** (2014) Փասիխանի բարբառը; **Ղանբարի Մ.** (2014) Սանգեսարի բարբառը; **Տոնոյան Ա.** (2015) Կովկասյան պարսկերեն. պատմահամեմատական ուսումնասիրություն; **Շոջայի Ռ.** (2015) Ամիր Փազվարիի դուբեյթիների լեզուն; **Իսրաելյան Ա.** (2015) Խորասանի բարբառը; **Ավչյան Հ.** (2016) Թալիշերենի Անբարանի բարբառը; **Մուսավի Մ.** (2018) Վաֆսի բարբառը:

[3] «Կովկասյան պարսկերեն» եզրով սահմանվում է պատմական Շիրվանի տարածքում խոսվող հարավարևմտահրանական բարբառների այն խումբը, որն իրանագիտության մեջ առավել հայտնի է երկու տարբեր՝ «մուսուլմանական թաթերեն» (ռուս. мусульманско-татский язык, անգլ. Muslim Tat language) և «քրիստոնյա թաթերի լեզու» (ռուս. язык татов-христиан, անգլ. «Christian-Tat language») կամ «հայ-թաթերեն» (ռուս. армяно-татский язык, անգլ. «Armeno-Tat language» անվանումներով: Պատմական Շիրվանի հյուսիսային սահմանին և դրանից հյուսիս ընկած տարածքներում խոսվող ջուհուրին (ռուս. джухури, անգլ. Juhuri), որն իրանագետներին առավել հայտնի է նաև «հրեական թաթերեն» (ռուս. еврейско-татский язык, անգլ. Judeo-Tat language) անվամբ, թեև պատկանում է իրանական լեզուների հարավ-արևմտյան խմբին և կովկասյան պարսկերենի հետ ունի հնչյունական, քերականական և բառապաշարային ընդհանրություններ, մասնագիտական գրականության մեջ դիտարկվում է որպես մեկ ընդհանրական լեզվի՝ թաթերենի երկու առանձին բարբառներից մեկը՝ հյուսիսայինը, որի

իրանագիտության ամբիոնն աշխարհում առաջին[4] և առայժմ միակ կենտրոնն է, թեև ժամանակակից պարսկերենի, տաջիկերենի և Քաբուլի դարիի հետ միասին դասական պարսկերենի ուղիղ շարունակողներից է, ի տարբերություն գրական հարուստ ավանդույթ և նորմատիվ քերականություն ունեցող նշված երեք լեզուների՝ գրեթե զուրկ է և՛ գրային ավանդույթից[5], և՛ գրական ստանդարտից[6]: Այս լեզվի գրական ավանդույթի և ստանդարտի, լեզվական բավարար նյութի (տեքստային և ձայնային) բացակայությամբ պայմանավորված՝ առայժմ և՛ տեսականորեն, և՛ գործնականում գրեթե անհնար է բուհական դասապրոցեսում ինտերակտիվ-հաղորդակցական մոտեցման կիրառումը, և

երկրորդ՝ հարավային բարբառը նույնանում է «կովկասյան պարսկերեն» եզրով սահմանվող լեզվի հետ:

[4] Կովկասյան պարսկերենի դասավանդումը ԵՊՀ իրանագիտության ամբիոնում մեկնարկել է 2015-2016 ուս. տարվանից՝ տողերի հեղինակի «Կովկասյան պարսկերեն. պատմահամեմատական ուսումնասիրություն» թեմայով թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից (29.06.2015թ.) և նույն տարում ասիստենտի պաշտոնում ԵՊՀ իրանագիտության ամբիոնում աշխատանքի անցնելուց հետո:

[5] Ի տարբերություն կովկասյան պարսկերենի՝ ջուհուրին ունի համեմատաբար հարուստ գրային ավանդույթ, որը ձևավորվել և զարգացել է վերջին 100 տարիների ընթացքում հիմնականում Մախաչկալայում և Նալչիկում [**Грюнберг, А., Давыдова Л.**, Татский язык // Основы иранского языкознания. Новоиранские языки: западная группа, прикаспийские языки, Москва, 1982, стр. 231-286.]:

[6] Ադրբեջանական Հանրապետությունում լատինագրի հիման վրա կովկասյան պարսկերենի այբուբենի և դրանով տարրական դասարանների համար դասագրքերի ստեղծման փորձ է կատարվել 1995-1996 թթ.: Կովկասյան պարսկերենի Ղոնաղքենդի խոսվածքի հիման վրա հրատարակվել են դպրոցական դասագրքեր Մ. Հաջիևի և Ն. Ջաֆարովայի կողմից, որոնք նախատեսված են եղել Ադրբեջանական Հանրապետության թաթական բնակավայրերում 1-3-րդ դասարանների աշակերտներին կովկասյան պարսկերեն դասավանդելու համար: Այժմ ադրբեջանական և ոչ մի դպրոցում կովկասյան պարսկերեն չի դասավանդվում:

հիմնական մոտեցումը, որ այս լեզվի դասավանդման դեպքում կիրառական և արդյունավետ է, կառուցվածքային մոտեցումն է[7]:

Հաշվի առնելով իրանական երկրորդ լեզու, այդ թվում և կովկասյան պարսկերեն սովորող ուսանողների մի մասի՝ հետագայում իրանական բանասիրությամբ մասնագիտանալու հեռանկարը, այնուամենայնիվ, միայն կառուցվածքային մոտեցման հիման վրա լեզվի ուսուցման արդյունավետությունը և նպատակահարմարությունը ևս վիճարկելի է, եթե այն չի զուգակցվում բացի լեզվի նկարագրական մեթոդից, այլ, մասնավորապես պատմահամեմատական, իսկ որոշ դեպքերում նաև զուգադրական կամ տիպաբանական մեթոդների քննությամբ ձեռք բերված արդյունքների՝ դասապրոցեսի ընթացքում օգտագործմամբ և դրանց շուրջ քննարկումների իրականացմամբ, որը պայմանականորեն այստեղ կանվանենք համալիր կառուցվածքային մոտեցում:

Նկարագրված խնդիրը վերաբերում է հատկապես կովկասյան պարսկերենին, որի պատմական զարգացման առանձնահատկություններով, տարածման լեզվաաշխարհագրական միջավայրով և դրա ազդեցությամբ պայմանավորված՝ ներքին և արտաքին կառուցվածքային համալիր փոփոխությունների մասին գիտելիքների փոխանցման, լեզվական իրողությունների վերլուծության հմտությունների զարգացման գործընթացը անհնար է կազմակերպել առանց լեզվի քննության նկարագրական,

[7] Օտար լեզուների ուսուցման կառուցվածքային (համակարգային) մեթոդի կիրառման հիմնական նպատակը ուսուցանվող լեզվի կառուցվածքային 4 մակարդակների (հնչյունաբանություն, ձևաբանություն, բառագիտություն և շարահյուսություն) և այդ մակարդակները կազմող միավորների հարացուցային և շարակարգային հարաբերությունների մասին համապարփակ պատկերացման ձևավորումն է, որի վերջնարդյունքը լինելու է ուսանողին տվյալ լեզվով կարդալու և գրելու հմտությունների փոխանցումը և դրանց զարգացումը:

պատմահամեմատական և տիպաբանական մեթոդների միաժամանակյա և համաչափ կիրառման:

Վերը բերվածը հաստատող հետաքրքիր օրինակ է ուսանողին կովկասյան պարսկերենի ձևաբանական որոշ, մասնավորապես թվականների, ներկա և ապառնի ժամանակների կազմության առանձնահատկությունները ներկայացնելու համար կիրառվող համալիր կառուցվածքային մոտեցումը, որի հիմքում ընկած է լեզվի քննության միանգամից երեք՝ նկարագրական, պատմահամեմտական և տիպաբանական համեմատության մեթոդներով ստացված արդյունքների զուգաչափ կիրառումը: Օրինակ, կովկասյան պարսկերենում թվականների 11-19 շարքի կազմության ներկայացումն ըստ նկարագրական մեթոդի և համեմատությունը ժամանակակից, միջին և հին պարսկերենների հետ ի հայտ է բերում ձևաբանական մի առանձնահատկություն, որի մեկնումը և վերլուծությունը հնարավոր չէ առանց տիպաբանական համեմատության մեթոդի ներգրավման: Նույնը վերաբերում է նաև այս լեզվի թվականների համակարգում քսանորդական դրությանը, որի առաջացման պատճառները ուսանողի համար վերլուծելու և քննելու համար պահանջվում է ոչ միայն պատմահամեմատական, այլ նաև տիպաբանական համեմատության մեթոդի կիրառում[8]:

[8] Կովկասյան պարսկերենում թվականների բառաքննությունը ցույց է տալիս, որ դրանում մի կողմից պահպանված է համաիրանական ընդհանրության շրջանից ժառանգված բուն իրանական շերտը, իսկ մյուս կողմից արձանագրված են այնպիսի ձևեր, որոնք իրանական կամ առնվազն հարավ-արևմտյան իրանական դիմագիծ չունեն: Տիպաբանական համեմատության մեթոդի կիրառմամբ է միայն հնարավոր դարձել վերլուծել կազմության այն տիպերի ի հայտ գալու պատճառները, որոնք թյուրքական և կովկասյան լեզուներից արված պատճենումների արդյունք են (**Տոնոյան Ա.**, Կովկասյան պարսկերենում թվականների կազմության որոշ առանձնահատկությունների շուրջ, Օրիենտալիա, պրակ 16 (2015), Երևան, էջ 3-12):

Կառուցվածքային համալիր մոտեցման կիրառման կարևոր երկու այլ օրինակներ են կովկասյան պարսկերենի ներկա և ապառնի ժամանակաձևերի կազմության առանձնահատկությունները, որոնց քննությունը և լեզվում ի հայտ գալու պատճառների վերլուծությունը պահանջում է ոչ միայն նկարագրական և պատմահամեմատական, այլ նաև տիպաբանական մեթոդի ներգրավում, խնդիրները լեզվաաշխարհագրական միջավայրի և դրա մաս կազմող լեզուների (ադրբեջաներեն, հայերեն, կովկասյան լեզուներ) հետ համեմատության մեջ ներկայացնելու անհրաժեշտություն։

Մատուցվող նյութը դյուրըմբռնելի դարձնելու համար համալիր կառուցվածքային մոտեցում է պահանջում նաև կովկասյան պարսկերենի քերականական համակարգի մաս կազմող այլ միավորների, այդ թվում պատկանելության կառույցի տարբեր տիպերի, անձնական և անձնական-կցական դերանունների շարակարգային տարբերակիչ առանձնահատկությունների, դերբայական կառույցների, ba նախդրի, rā հետադրության մեկնումը և այլն։

Ամփոփելով պետք է նշել, որ կովկասյան պարսկերենի բուհական դասավանդման քառամյա փորձը ապացուցում է այս լեզվի քերականական տարբեր իրողությունների վերլուծության և լսարանին առավել մատչելի և հասկանալի մատուցման գործում ոչ թե օտար լեզուների ուսուցման ավանդական՝ կառուցվածքային, այլ համալիր կառուցվածքային մոտեցման արդյունավետությունը, որի հիմքում ընկած է լեզվի քննության միանգամից երեք մեթոդների (նկարագրական, պատմահամեմատական և տիպաբանական) մեկտեղումը և համաչափ կիրառումը։

ON SOME METHODOLOGICAL FEATURES IN UNIVERSITY TEACHING OF CAUCASIAN PERSIAN (TAT) LANGUAGE

Artyom Tonoyan

(Summary)

The purpose of this article is to discuss some methodological features that play a key role in the process of teaching the Caucasian-Persian language in the framework of Iranian Studies.

Four-year experience in teaching Caucasian Persian at the Department of Iranian Studies of YSU shows, that using only a structural approach in the educational process is not effective enough and a complex-structural approach of using the results of descriptive, comparative historical and typological methods at the same time, may be more productive.

О НЕКОТОРЫХ МЕТОДОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЯХ ВУЗОВСКОГО ПРЕПОДАВАНИЯ КАВКАЗСКОГО-ПЕРСИДСКОГО (ТАТСКОГО) ЯЗЫКА

Артем Тоноян

(Резюме)

Целью данной статьи является обсуждение некоторых методологических особенностей, которые играют ключевую роль в процессе преподавания кавказско-персидского языка в рамках иранистики.

Четырехлетний опыт преподавания кавказского персидского языка в кафедре иранистики ЕГУ показывает, что использование только структурного подхода в учебном процессе недостаточно эффективно и более продуктивным может быть комплексно-структурный подход с использованием результатов описательных, сравнительно-исторических и типологических методов одновременно.